ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/81

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.04.2020թ. թիվ 01.1/26-1/5339-2020 գրությամբ «ԳԻՊՇԻՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 06.04.2020թ. թիվ 01/61-6302 գրության հիման վրա, 09.04.2020թ. թիվ 01.1/26-1/5339-2020 գրությամբ նախաձեռնել է «ԳԻՊՇԻՆ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ԳԻՊՇԻՆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկներն և դիրքորոշումը.</u>

«ԳԻՊՇԻՆ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/81 ընթացակարգի շրջանակներում 16.04.2020թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկներն և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 06.04.2020թ. թիվ 01/61-6302 գրությամբ հայտնել է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/41 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «ԳԻՊՇԻՆ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից ներկայացված հայտում արձանագրվել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ: Ընկերության կողմից ներկայացված ծավալաթերթ նախահաշվում նշված չի կազմակերպության անվանումը և տնօրենի անուն ազգանունը:

Պատվիրատուն հայտնել է, որ գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի պահանջով՝ ծանուցել է Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Սակայն, Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունն և գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 42-րդ կետի պահանջով, մերժել է Ընկերության կողմից ներկայացված հայտն, որը հանգեցրել է գնման գործընթացին վերջինիս հետագա մասնակցության դադարեցմանը:

Պատվիրատուն հայտնել է, որ վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետով, առաջարկում է Ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/81 ընթացակարգի շրջանակներում 16.04.2020թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/81 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

1. ՍՑ-ՆԳ-2020/81 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

2. Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար հայտարարվել է ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/41 ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Մրցույթ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԳԻՊՇԻՆ» ՍՊԸ-ն:

3. Մրցույթի գնահատող հանձնաժողովի 23.03.2020թ. թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «ԳԻՊՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ նախահաշվում առկա է անհամապատասխանություն, այն է՝ չի նշվել կազմակերպության անվանումը և տնօրենի անուն ազգանունը:

4. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ որոշվել է Կարգի 41-րդ կետի համաձայն՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և համակարգի միջոցով ծանուցել Ընկերությանն՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունը:

5. Մրցույթի գնահատող հանձնաժողովը 31.03.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է Ընկերության հայտն, այն հիմնավորմամբ, որ «ԳԻՊՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չի շտկվել:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.04.2020թ. թիվ 01.1/26-1/5339-

2020 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 06.04.2020թ. թիվ 01/61-6302 գրությունը և կից փաստաթղթերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում սպանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի ա) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար հայտարարվել է ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/41 ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԳԻՊՇԻՆ» ՍՊԸ-ն:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 23.03.2020թ. թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «ԳԻՊՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ նախահաշվում առկա է անհամապատասխանություն, այն է՝ չի նշվել կազմակերպության անվանումը և տնօրենի անուն ազգանունը:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ որոշվել է Կարգի 41-րդ կետի համաձայն՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և համակարգի միջոցով ծանուցել Ընկերությանն՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունը:

Մրցույթի գնահատող հանձնաժողովը 31.03.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ «ԳԻՊՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չի շտկվել:

Այսպիսով՝ Մրցույթի հրավերով հավելված 1-ը՝ ծավալաթերթ-նախահաշիվը, սահմանվել է հետևյալ տեսքով.

Հավելված թիվ 1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի փողոցներում եզրաքարերի վերանորոգման աշխատանքների

ՀՀ դրամ

N	*Աշխատանքների անվանումը*	*Չ/մ*	*Քանակը*	*Միավորի գինը*	*Ընդամենը*
1	Միաձույլ բետոնե եզրաքարերի քայքայված հատվածների քանդում, շին. աղբի բարձում և տեղափոխում դեպի լցակույտ, բետոնե եզրաքարերի վերականգնում (նորոգում) B15 դասի բետոնով	գծմ	75	2272.72	170454
2	Բազալտե եզրաքարերի քանդում հիմքով, շին.աղբի բարձում և տեղափոխում դեպի լցակույտ, (15x30) սմ կտրվածքով բազալտե նոր եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով, կողահատման իրականացմամբ	գծմ	237	6409.095	1518955.5

3	Բազալտե եզրաքարերի քանդում հիմքով (եզրաքարերի պահպանմամբ հետագա օգտագործման համար), շին.աղբի բարձում և տեղափոխում դեպի լցակույտ, (15x30) սմ բազալտե եզրաքարերի վերատեղադրում, կողահատման իրականացմամբ	գծմ	100	2272.72	227272
	Ընդամենը				1916681.5
	Շահույթ 10 %				191668.15
	Ընդամենը				2108349.7
	ԱԱՀ 20%				421669.9
	Ամբողջը				**2530020**

Տեխնիկական բնութագիր

Միաձույլ բետոնե եզրաքարերի քայքայված բետոնի քանդում;

1. Բետոնե եզրաքարերի (18x60սմ, 20 x60 սմ չափերի) վերականգնում (նորոգում) B15 դասի բետոնով կամ նորի կառուցում B20 դասի բետոնով;
2. Բազալտե եզրաքարերի քանդում հիմքով, նոր բազալտե եզրաքարերի (15x30) սմ կտրվածքով տեղադրում բետոնե հիմքով,
3. Բազալտե եզրաքարերի քանդում հիմքով (եզրաքարերի պահպանմամբ հետագա օգտագործման համար), բազալտե եզրաքարերի վերատեղադրում,
4. Հին և նոր եզրաքարերի տեղադրումից հետո կատարել կողահատում,
5. Շին աղբի բարձում և տեղափոխում թափոնատեղ,

Տեխնիկական առաջադրանք

1. Աշխատանքներն իրականացնել շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան
2. Նշված աշխատանքները պետք է իրականացվեն Ավան վարչական շրջանի կողմից տրվող պատվեր առաջադրանքների հիման վրա:
3. Ըստ անհրաժեշտության պատվիրատուի հանձնարարականով հնարավոր է աշխատանքների ծավալների փոփոխություններ: Շինարարական աշխատանքների ընթացքում ապահովել շինհրապարակների պատշաճ կազմակերպումը՝ կիրառելով Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. հ.405-Ն որոշմամբ սահմանված շին.հրապարակների ժամանակավոր պատնեշով առանձնացման և տեղեկատվական վահանակների տեղադրման կետը,
4. Նախատեսել աշխատանքների ծավալի իրականացումը 2-րդ եռամսյակում՝ 40%, 3-րդ եռամսյակում՝ 40% և 4-րդ եռամսյակում՝ 20%;

Աշխատանքներն իրականացնել առնվազն 3-4 տեղում միաժամանակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ **ԿԱՊԱԼԱՌՈՒ**

--- ---

/ստորագրություն/ /ստորագրություն/

Կ.Տ Կ.Տ

Ընկերությունը հայտով ներկայացրել է թիվ 1 հավելվածը՝ ծավալաթերթ-նախահաշիվը, որը հաստատված է Գևորգ Մկրտչյանի էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 23.03.2020թ. թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «ԳԻՊՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ

նախահաշվում առկա է անհամապատասխանություն, այն է՝ չի նշվել կազմակերպության անվանումը և տնօրենի անուն ազգանունը:

Մրցույթի գնահատող հանձնաժողովը 31.03.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ «ԳԻՊՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չի շտկվել:

Այսպիսով, ուսումնասիրելով Մրցույթի հրավերով սահմանված պայմանագրին կից ներկայացված հավելված 1-ը՝ ծավալաթերթ-նախահաշիվը, ինչպես նաև Ընկերության կողմից հայտով ներկայացված հավելված 1-ը՝ ծավալաթերթ-նախահաշիվը, արձանագրում եմ, որ ի տարբերություն Մրցույթի հրավերով սահմանված մյուս բոլոր հավելվածների, որտեղ որպես պարտադիր վավերապայմաններ սահմանված են մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունն, պայմանագրին կից ներկայացված հավելված 1-ում՝ ծավալաթերթ-նախահաշվում, առկա է միայն ստորագրության դաշտը, որը ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ Գևորգ Մկրտչյանի էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվել է, միևնույն ժամանակ Ընկերության կողմից պահպանվել է Կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի ա) պարբերությամբ սահմանված պահանջն, այն է՝ Ընկերությունը հայտով ներկայացրել է ***հաստատված՝*** լրացված ***ծավալաթերթ-նախահաշիվ***, միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ Ընկերության կողմից հայտով ներկայացրած թիվ 1 և 2 հավելվածներում որպես «ԳԻՊՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն նշվել է Գ. Մկրտչյան, և վերջիններս վավերացվել են Գևորգ Մկրտչյանի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչից կարելի է նույնականացնել և եզրակացնել, որ Ընկերության կողմից ներկայացված հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը Գևորգ Մկրտչյանի էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացվել է որպես «ԳԻՊՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն Գ. Մկրտչյան կողմից:

Այսպիսով՝ գտնում եմ, որ նման պայմաններում առկա չէ «ԳԻՊՇԻՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.04.2020թ. թիվ 01.1/26-1/5339-2020 գրությամբ «ԳԻՊՇԻՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**